Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայր-գրագիր Թիֆլիսցոյ

Շ. Արագվիսպիրեալի

ԴԺԲԱՂԴ ԹԱԹՈՍ

կամ

ԻՍԿ ՔԱՄԻՆ ԸՆԴ ՄԻՋՈՑԻՆ ՄՈՆՉՈՒՄ, ՀԵՌԵՉՈՒՄ ԵՒ ՍՈՒԼՈՒՄ ԷՐ

(Հոգեբանական էսքիզ)

Թարգմանեց Ռուսերէնից

ԱՌՆՏԻՔ ԲԱՐՍԱՄԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսես Վարդանեանցի.
Тип. М. А. Вартаняна Вельяминовская ул. № 7.
1902

2011-03

Շ. Արագվիսպիրեալի

899.962.1
Ա- 82

ԴԺԲԱՂԴ ԹԱԹՈՍ

կամ

ԻՍԿ ՔԱՄԻՆ ՍՏԳ ՄԻՋՈՑԻՆ ՄՈՒՆՉՈՒՄ,
ՀԵՌԱՁՈՒՄ ԵՒ ՍՈՒԼՈՒՄ ԷՐ

(Հոգեբանական էտիւդ)

Թարգմանեց Ռուսերէնից

ԱՌԵՏԻՔ ԲԱՐՍԱՄԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանցի.
Тип. М. А. Вартанянца Вельяминовская ул. № 7.
1902

21 FEB 2013

74.457

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Апрѣля 1902 г.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-Арм. ССР

Ռանչում, հառաչում և սուլում էր այնան պաղ քամին, սաստիկ զընգզընգացնում էր դռների ու լուսամուտների չրջանակները՝ կարծես աղաչում էր ներս թողնել իրեն, բայց Թաթոսը չէր լսում նրա ոչ հառաչանքը և ոչ սուլելը. նա, կուրծքի վերայ դարսելով ձեռքերը, մէկ ոտքով չոքած խոնարհեց թախտի առաջ և չէր հեռացնում իւր չուարած աչքերը Վարթոյի հանգած, կեանքից զուրկ երեսից։

Չէ լալիս Թաթոսը, արտասունք չէ թափում, թէպէտ մէկ ժամ էլ չէ անցել, որ իր սիրելի Վարթոն բաժանուել է այս աշխարհից։

Թաթոսը գիտէ, որ եթէ ոչ վաղը, ապա միւս օրն այդ էակին, որ դեռ քիչ առաջ իրան էր կենդանութիւն ներշնչում, կ'յանձնեն հողին, մտնջենասպէս կ'հեռացնեն իւր մօտից, և

ինքը դարձեալ կ'մնայ մենակ, ինչպէս որ էր մինչև Վարթոյին հանդիպելը։

Բայց, ոչ... Թաթոսը մենակ չի մնայ։ Ճշմարիտ է, շուտով Վարթոյի մարմինը կ'յանձնեն հողին, բայց ինքը, Վարթոն լիովին կ'մնայ նրա հետ։

Թաթոսն ու Վարթոն այնպէս միաւորուել են հոգով, որ մահն էլ չի բաժանի նրանց. սէրն այնպէս ամուր կապել էր նրանց, որ նա ամեն տեղ կ'լինի նրա հետ։ Այդ սրտի խորքից էր զգում Թաթոսը և դրա համար էլ չէր լալիս։ Բաւական էր արդէն, ինչքան արտասուք որ թափել էր նրա համար։

Վարթոյի եօթն օրուայ տկարութիւնը կատարելապէս թարշամեցրեց Թաթոսին։ Վարթոն սաստիկ տանջւում էր թոքերի բորբոքումով և նրա հետ միասին տանջւում էր և Թաթոսը։ Վարթոյի իւրաքանչիւր հեկեկանքը, դժուար շնչառութիւնը, սրածայր դանակի պէս խրւում էր Թաթոսի կուրծքի մէջ ու անգթաբար կտոր-կտոր անում նրա սիրտը։

Վերջապէս երբ նրա կրծքից մի ուժգին և սրտաշարժ հիչ դուրս թռաւ, նա յանկարծ հանգաւ, տեսնելով այդ՝ Թաթոսը հանգստացաւ

ու լռիկ, մտախոհ նայում էր մեռած Վարթոյի երեսին։

Նայում էր Թաթոսը ու ակամայ իւր ամբողջ անցեալը նկարւում էր նրա աչքի առաջ։

Ա՜խ, ինչպէս բաղդաւոր էր նա վերջին երկու տարին... Այդ երկու տարին կատարելապէս հարկադրեցին նրան անցեալի յիշողութիւնները մոռանալ։

Վերջին երկու տարիները նոր կեանք ներշնչեցին նրան։

Ի՞նչ էր նա առաջ, մինչ ամուսնանալը, և ինչպէս փոխուեց կեանքը, երբ ամուսնացաւ նրա հետ։ Անցեալը հարկադրում էր նրան ատել ինքն-իրան և դրանով նրա կեանքը լիկ նահատակութիւն դարձաւ, իսկ բոլոր մարդիկ թւում էին նրան դահիճներ, և իսկապէս նրա բոլոր անցեալը ներկայացնում էր անընդհատ նահատակութիւն, որի մէջ նա մի ծղօտ անգամ չէր գտնում, որ խեղդուողի պէս բռնէր և ասէր՝ թէ կեանքն այլ ևս այնքան դառն ու թունալից չէ, ի՛նչպէս երևում էր նրան։

Մանկութիւնից սկսած նա ոչ մի անգամ, ոչ մի ջերմ, սրտանց խօսք չէր լսել, իսկ առանց դորան կեանքի մէջ ոչինչ չի կարող

մխիթարական լինել։

Նա միշտ օտարներով է շրջապատուած եղել, միշտ կոպիտ խօսքեր և հայհոյանք է լսել։ Ի՞նչպիսի դժուարութեամբ ազատուեց նրանց մօտից՝ մի ընկերութեան մէջ գրագրի պաշտօն ստանձնելով։ «Վերջապէս ազատուեցայ», ասաց նա նոր պաշտօնն ստանալով, բայց դարձեալ խաբուեց։ Այնտեղ էլ նա միևնոյն կոպտութիւնը, միևնոյն հայհոյանքները լսեց և... ընկերների ծաղրը... Չ'գտաւ այն, ինչ որոնում էր։ Ամենայն օր գնում էր դիւանատուն, որտեղ չարունակ գլուխը քաշ դցած գրում էր, գրում և գրում։ Ամեն ամսի քսանին ստանում էր քսանուհինգ բուբլի. կարծես գրանով էին կամենում սիրուել նրա կեանքը։ Դիւանատանը՝ մշտական ծաղր ու հայհոյանք, տանը՝ տաղտկալի միայնակութիւն։ Կեանքը Թաթոսի համար իսկական դժոխք էր. ինչո՞ւ համար էր նա կրում այս բոլոր տանջանքները։

Մի՞թէ նրա համար միայն, որ մի կտոր հաց ունենայ և ապրի առանց ուրախութեան նշոյլի։

Ի՞նչ անմտութիւն։

Ամբողջ աշխարհում չ'գտնուեցաւ մէկը, որ կարեկցէր նրան։ Ապրում էր նա միայնակ, տանջուելով ծածկաբար, և այդ միայնակութիւնն այնպէս էր յուսահատեցնում ու տանջում նրան, որ նա վճռեց վերջ դնել իւր կեանքին։ Մէկ օր մինչև անգամ գնաց գետի կողմը, որ իրագործէ իւր դիտաւորութիւնը, բայց հէնց այդ միջոցին հանդիպեց նրան դրացու աղախինը և այնպիսի սիրալիր հայեացք ձգեց Թաթոսի երեսին, որ նա ապուշի նման կանգ առաւ իւր տեղը և չէր կարողանում շարժուել տեղից։

Աղջիկը նրա մօտովն անցաւ և իւր յանձնարարութիւնը կատարելուց յետոյ, երբ վերադառնում էր, տեսաւ՝ որ Թաթոսը դեռ նոյն տեղը կանգնած է մնացել։

—Վարթոյ, գոչեց Թաթոսը, երբ աղջիկը մօտեցաւ նրան ու մեկնեց իւր երկու ձեռքը։

—Թաթոս, ի՞նչ է պատահել, քաղցրութեամբ հարցրեց Վարթոն, մեկնելով իւր ձեռքը։

Թաթոսը չտալով բռնեց նրա ձեռքը և ամուր սեղմում էր։

—Ինչո՞ւ այդպէս դունաթափ էիր, Թաթոս, ի՞նչ է պատահել քեզ, աւելի քաղցրութեամբ

կրկնեց Վարթոն իւր հարցը, աշխատելով ազատել իւր ձեռքը։

—Վարթոյ, մի՛ քաշի ձեռքդ, մի՛ քաշի, նախախնամութիւնն ինքն ուղարկեց քեզ ինձ փրկելու... Թաթոսն աղաչում էր այնպիսի ձայնով, որ Վարթոյի ցաւագար սիրտը խղճաց. նա խղճաց նրան, չ'խլեց իւր ձեռքը, իսկ Թաթոսն անխնայ սեղմում էր. նա կանգնած տեղը երերւում էր և երևում էր, որ բան էր կամենում ասել, բայց չէր վճռում։

—Վարթոյ, սկսեց նա դողդողուն ձայնով ու ամբողջովին կարմրած,—դու... այո՛... դու հօ, ես գիտեմ, ամուսնացած չես, ուրեմն մի՛ մերժի... իմ կինն եղիր... Վարթոն ցածրացրեց գլուխը ու երկար ժամանակ կանգնած էր լռիկ. իսկ Թաթոսն ամբողջովին դողդողում էր. սառը քրտինք պատեց նրան։

—«Մի՞թէ այսպիսի վայելչագեղ հրեշտակը կ'համաձայնի ամուսնանալ ինձ նման չնչին արարածի հետ. և ի՞նչ իրաւունք ունէի ես այդպիսի առաջարկութիւն անելու նրան», մտածում էր այդ միջոցին Թաթոսը։

Նրա դէմքն արտայայտում էր դառն տանջանք. լաւ... չշնչաց Վարթոն և բարձրացրեց կոպերը, որի տակից երևում էին գիշերի պէս մութ աչերը։

Այո՞, համաձա՞յն ես, Վարթոյ, ուրեմն դու համաձա՞յն ես, ի՛մ Վարթոյ... —Թաթոսը կարծես խելագարւում էր ուրախութիւնից. նա մինչև անգամ չփոթում էր խօսքերը և սեղմում մանկամարդ աղջկայ ձեռքը։—Համաձայն եմ, ի՛մ Թաթոս, թո՛ղ ես կուչանամ,—հանդարտացրեց նրան Վարթոն ու դիմեց դէպի տուն։

Այժմ այս ամբողջ պատկերը պարզ ներկայացաւ նրա աչքի առաջ, երբ մտքով պացաւ դէպի իւր անցեալը. և նրա յիշողութեան մէջ յարութիւն առան չատ երջանիկ րոպէներ. նրան այնպէս էր թւում, թէ այս բոլորը պատահեց այժմ, այս վայրկեան նին։ Նա ամուր գրկեց անչունչ դիակը ու սեղմեց իւր սրտին. իսկ քամին այդ միջոցին անդադար սուլում, մռնչում ու հառաչում էր։ Սենեակում եղած լամպարն աղօտ լուսաւորում էր Վարթոյի երեսը։

Երկու տարի դեռ չէր անցել այն օրից, երբ Թաթոսը Վարթոյի հետ ամուսնացաւ։

Նրանք քաղաքի ծայրին վարձեցին մի սենեակ և այնտեղ ապրում էին ինչպես ճգնաւորը, խաղաղ, հեռու ամենքից: Երկու տարուայ ընթացքում այդ սենեակն էր վկայ նրանց բաղդին ու սիրով լի կեանքին. վերածնուած Թաթոսին էլ չէին չփոթում ոչ ընկերների ծաղրը, ոչ էլ այդքան հեռու տեղից ծառայութեան գնալը. ուրախ երգելով ու սուլելով գնում էր նա գիւանատուն և այնտեղ աշխատասիրու թեամբ շարունակ գրում էր, գրում ու գրում: Իսկ երբ վերադառնում էր տուն, վարթոն դիմաւորում էր նրան դրան մօտ առանձին սիրով և ասում. «Իմ սիրելիս, քաղցած չե՞ս արդեօք»: Այս խօսքերը բաղդաւորեցնում էին նրան և կեանքն երջանիկ էր թւում:

Թաթոսն սկսեց նաև երեկոները ծառայութեան գնալ և այդ աշխատանքի համար նա ստանում էր տասը ռուբլի, բացի ռոճկից: Այժմ նա հարկադրուած էր աւելի աշխատել, բայց Թաթոսի համար այդ ոչինչ էր:

Նա զգում էր, որ իւր աշխատանքն անպատակ չէ: Նա աշխատում էր Վարթոյի համար և չ'կար այնպիսի նուէր, որ նա ընծայէր նրան առանց զուարճութեան:

Ա՜խ, ի՞նչ բաղդաւոր էր Թաթոսն այս վերջին երկու տարին. բայց այժմ քարասիրտ մահը կեանքով լի Վարթոյին սառը դիակ դարձրեց, մաշեց դժբաղդ Թաթոսին... բայց Թաթոսը չէր մատնում իրան յուսահատութեան. նա մտածում էր. «Դեռ ես բոլորը չեմ կորցրել, ես կ'լցնեմ իմ դատարկ կեանքը յիշողութիւններով. կ'աղօթեմ նրա համար, մինչև որ ես էլ գնամ նրա մօտ»: Եւ այդ միջոցին քամին մռնչում էր, կարծես թէ աշխատում էր Թաթոսի ուշադրութիւնը դարձնել իւր վրայ, բայց Թաթոսը չէր լսում: Այդ ժամանակ լսուեց դրան թխթխկոց:

Ո՞վ էր արդեօք:

Ո՞վ կարող էր գալ Թաթոսի մօտ իններորդ ժամին, երեկոյեան: Նրա մօտ սովորաբար ոչ ոք չէր գալիս. նոքա այնպէս բաղդաւոր էին երկուսով, որ կարիք չէին զգում հիւրերի այցելութեան. նոքա ոչ ոքի մօտ հիւր չէին գնում և ոչ էլ հրաւիրում իրանց մօտ. Վարթոն ամբողջ շաբաթը մահի հետ էր կռուում և բոլորովին ոչ ոք չեկաւ նրանց մօտ: Իսկ այժմ ո՞վ մտածեց գալու:

Այդ մտածելիս աւելի զօրեղ թխթխկոց

լսուեց։ Թաթոսը ձեռքը քսեց ճակատին և դիմեց դէպի դուռը։

«Ո՞վ կարող էր լինել. արդեօք ծառայութեան հօ չեն կանչում ինձ...—մտածեց նա ու բացեց դուռը. բաւականին երկար խնդրելուց ու աղաչանքից յետոյ վերջապէս յաջողուեց քամուն ներս մտնել սենեակ. նա սկսեց ուրախութեամբ խաղալ,—արագութեամբ բոլոր անկիւնների չուրջը վազվզել, շրջապատել Վարթոյին ու յետոյ պատերազմել լամպարի հետ, որի մէջ յանկարծ բոցը զօրեղ կերպով բորբոքուեց և իսկոյն հանգաւ։

Ա՞յստեղ է բնակւում Վարթոյ Մակարաձէն,—հարցրեց անծանօթ ձայնը։

Այո՛, այստեղ է. .

Ո՞վ ես դու։

Այս նրա համար եմ բերել,—պատասխանեց անծանօթը, յանձնելով մի նամակ։ «Երևի, ընկերուհին է ուղարկել», մտածեց Թաթոսը և վառեց լամպարը։ Վարթոն յաճախ էր ստանում նամակներ այդ ընկերուհուց և բովանդակութիւնը պատմում Թաթոսին, սակայն ինքը Թաթոսը ոչ մի անգամ չէր կարդում այդ նամակները. և ոչ մի անգամ չէր եկել նրանց

մօտ այդ ընկերուհին. ինչո՞ւ համար ինքը կըրկին կարդար այդ նամակները. չէ՞ որ Վարթոն միշտ նրան հաղորդում էր նրանց բովանդակութիւնը։ Նրան մինչև անգամ ուրախութիւն էր պատճառում, որ Վարթոն ինքն էր պատմում և նամակը չէր տալիս Թաթոսին կարդալու։

Մթթէ նրա համար աւելի գերադասելի չէր իւր սիրելի Վարթոյի պատմածը լսել։ Եւ ինչպէս քաղցր էր պատմում նա։ Իսկ երբ վերջացնում էր պատմութիւնը, Թաթոսը յաճախ համբուրում էր նրա կարմրած շրթունքներն ու անդադար սպասում նոր, նոր պատմութիւնների։

—Վարթոյ, սիրելիս, նամակդ... չոքելով մրմնջաց Թաթոսը ու մօտեցրեց նամակն երեսին. նա ուշադրութեամբ նայում էր նրա վերայ, կարծես կամենում էր իմանալ թէ ինչ անէ նամակը. բայց լուռ էր, լամպարի փալփլուն լուսով հազիւ կարելի էր նկատել նրա ծածկած աչքերն ու յաւիտեան քնած դէմքի գծագրութիւնը.

—Սիրելիս, Վարթոյ, ահա Դարոյի գրած նամակը, բայց ինչո՞ւ համար... յիշում ես, դու

ուրախութեամբ ստանում էիր ու պատմում բովանդակութիւնն ինձ. իսկ այժմ, ինչու... Ա՜խ... Թաթոսը ծածկեց նորան ջերմ համբոյրներով:

—Այժմ ես կարդամ, ես պատմեմ քեզ Դարոյի գրած նամակի բովանդակութիւնը... Երևի սա քո սիրելի Դարոյից է,—արտասանեց Թաթոսը ու բացեց ծրարը. «Սիրելի Վարթոյ»,—լսում ես, իմ թանկագին,—նա գրում է: «Սիրելի Վարթոյ», դարձեալ դարձաւ նա դէպի հանդուցեալը և նորից սկսեց կարդալ բարձրաձայն: «Ես կ'կամենայի ամենայն օր լինել քեզ հետ, ամենայն րոպէ համբուրել, գրկել քեզ ու հանգստանալ քո կրծքի վերայ. սակայն դու նշանակել ես միմիայն երկու օր շաբաթը, այն էլ այս քանի օր է չես գալիս»:

—Ի՞նչ, գոչեց նա, կարծես թէ ամբի գոռոցն ասլչեցրեց նրան. նա նայեց Վարթոյի երեսին:

Նա հանդարտ էր, նա չէր լսում ոչինչ և չէր հասկանում այն, ինչ որ ասում էին նրան:

—Վարթոյ, այս ո՞վ է գրում—պատասխան չ'կար. նա նայեց ստորագրութեանը և կարդաց. «Քո Վախտանգ»:

—Ո՛չ, ո՛չ... սուտ է, սո՛ւտ.—խուլ ձայնով արտասանեց նա ու ամբողջ մարմնով դողալով սկսեց չարունակել կարդալը. «Դու նո գիտես, սիրելիս, որ ես շուտով գնալու եմ գիւղ, որտեղ կ'մնամ երկու ամիս. եւ միմիայն քո նամակները կ'մխիթարեն ինձ այնտեղ. քանի որ այստեղ եմ, սիրելի Վարթոյ, զուարճացրու ինձ քո փայփայանքով. դու յիշում ես, ինչ բաղդաւոր էինք միասին անցեալ շաբաթ: Արդեօք հո չ'մրսեցար, աղաւնեակս. զարհուրելի մրրիկ էր, երբ մենք բաժանուեցինք. չ'լինի քէ, դու տկարացար եւ այդ պատճառով չ'եկար նշանակուած ժամին. Աստուած ազատէ... ես կամենում էի ինքս գալ քեզ մօտ այսօր, սակայն չ'վճռեցի. յիշում եմ, դու ասել ես ինձ, որ ամուսինդ նամակներդ չէ կարդում, այդ պատճառով ես գերադասեցի կրկին գրել քեզ. վաղն անշուշտ կ'սպասեմ. յաւիտեան քո Վախտանգ» —Ա՜խ...—դուրս թռաւ Թաթոսի կրծքից: Նա վեր թռաւ տեղից և յանկարծ բռնեց իւր սիրտը. դողն ընդդրկեց նրան. նա կոտրտում էր ձեռքերը և պատառոտում զգեստը...

—Ա՜խ—սկսեց ողբալ նա ու երկու ձեռ-

քով բռնեց մազերը, կարծես կամենում էր կարգի բերել իւր մտքերը։ Նրա գլուխն այրւում էր, քունքերը բաղխում էին և յանկարծ ամեն բան մթնեց։ Նրա ջղերը թուլացան, չ'կարողանալով դիմանալ այդ հարուածին. նա խորը շունչ քաշեց և ուժասպառ վայր ընկաւ թախտի առաջ, յատակի վերայ։

Այդ չնչով, երևում էր, դուրս թռաւ նրա սրտից այն բոլորը, ինչ որ կազմում էր նրա սրտի սրբութիւնը, որի մէջ ամփոփուած էր նրա հաւատը և այն, որ կապել էր նրան կեանքի հետ։

Այժմ նա ոչինչ չէր զգում.

Վարթոյի նման նա ոչինչ չէր լսում, ոչինչ չէր զգում, չ'նայելով որ քամին շարունակում էր ողբաձայն սուլել, հառաչել և մռնչել...։

ՎԵՐՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՆ
ՀՍՍՀ-ՈՒՄ
Ա. ՍԱՍՈՒՆՈՎԻ

«Ազգային գրադարան»
NL0387055

74.457

Դիմել Թիֆլիս՝ կենդրոնական գրատուն ձառանցին.

899.962-1
Ա-82